

հաւատացելոց ի Վրիստոս, և աստ եթէ զտեսական, և եթէ զնիւթական եկեղեցւոյ ասէ, յոյր արգանդէ ի սուրբ աւազանէն վերստին ծնանին սուրբ մկրտութեամբ, յորգեղրութիւն շօրն երկնաւորի. վասն որոյ որդիք Մօր լուսոյ անուանին և են. և նորին օրինադրութեանն հլու և պաշտպանիչք, ըստ որոյ և Պօղոս ասէ, « որ է միութիւն և հաստատութիւն ճշմարտութեան », այս ինքն հաստատ պահող զճշմարտութիւնն ի ձեռն մանկանց իւրոց. ըստ այսմ կարօտին օգնականութեան սրբոց, և նոքա յօժարին առ այս. վասն այսորիկ ասաց « ի լուսաւորել զմանկունս սուրբ եկեղեցւոյ », վասն այսորիկ ընտրեաց Աստուած զսուրբն զի լուսաւորեսցէ զմանկունս եկեղեցւոյ բազմապատիկ իմաստից բանիւք մինչ էրն ի մարմնի, զորս ընկալաւ յառաջադրութենէ սուրբ եկեղեցւոյ՝ և յԱստուծոյ, կալ նոցա յանբիծ հաւատս և յարդար վարս Աստուած պաշտութեամբ. և յետ հրաժարելոյն յաստեացս՝ անհետադարձ բարեխօսութեամբ իւրով օգնական հասանելով ի թիկունս նոցա, որով կարողացին զդիմի հարկանել յաւուր չարեաց առ ի պաշտպանել զճնորս և զանուցիչս իւրեանց զսուրբ եկեղեցիս ի դրանց դժոխոց՝ այս ինքն ի բռնութենէ անհաւատից, յառարկութեանց հրեսիովտաց, և նոցին պետաց, յարձակմանէ զիւաց, և ի ծոց նորին գումարելովք գումարեսցի ի վերին յաղթական եկեղեցւոջ, որ ի կամարս լուսեղէնս. և զայս՝ մինչդեռ էր ի մարմնի, յայտ առնէր զգալապէս. ուստի կցէ ընդ նախակարգեալ բանս՝ իբրև քաղցրախօս լուսնակ, յասելն:

(Մարտիրոսի):

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՀՆՈՒԹԻՆՔ ՀԱՅՐԵՆԵԱՅ.

(Մարտիրոսի):

ՄԷՆԱՍԿԱՆ ՎՐԱՆԱՅԻ.

Տխուր անցից յիշատակները պապա- յից սրտից մէջ զարթեցնող հնութեան նշխար է այս մենաստան կիսաւեր. Տաճարի շէնքն քառանկիւնի. ներքին լայնութիւնն և երկայնութիւնն ութն քայլ. ամբողջ որմունքը, սիւնքն և կաթուղիկէն աղիւսակերտ. կաթուղիկէ տաճարին, որ հաստատուած է եղել երկու արեւմտեան սեանց և երկու արեւելեան կիսասեանց վերայ՝ կործանուած է. թողլով միայն շրջապատ որմունքն՝ մէջ եկեղեցւոյն զարդարուած է ազգի ազգի քարաքանդակ և աղիւսակապ խորշերով կամ պատուհաններով. ունի երեք սեղան, մինն մեծ, որոց վէմքարինքն կից յորմն արեւելեան, ունի հինգ դուռն, երեքն արեւմտեան, միջինն աւագ դուռն բարձր և լայն. եկեղեցւոյ մէջ տեղը կանգնած կայ կոփածոյ միապաղաղ քարէ սիւնաձև արձան. նոյն պիսի սիւն մի ևս արեւմտեան դրան հանդէպ արտաքոյ: Տաճարի մէջ կան երկու գերեզմանք, արեւմտեան մեծ դրան կից. գերեզմանաքարերի վրայ թէև ամենեին զիր չի նշմարուի, բայց ես հաւանած եմ կարծել թէ սոցա մինն Վարդուղէմէոս Ապիսկոպոսին պիտի լինի, միւսն ուրիշ մէկին, որք ի նշան յարգանաց և երախտագիտութեան այս տեղ ամփոփուած կլինին. հարաւային կողմէն տաճարին կցուած է եղել թաղակապ և աղիւսակերտ փառա-

ւոր շէնք, որոց տանիքն հաստատուած են տաճարի որմոյ և կամարակապ սեանց վերայ. այս շինութեան երկարութիւնն գեոփորը ինչ աւելի է քան զտաճարինն, իսկ լայնութիւնն երկու քայլ. գուցէ սա լինի նոցա դպրոցը, ըստ որում բաց այս, միւս շինուածոց մէջ չէ կարելի դպրոցի յարմարութիւն նկատել. իսկ եկեղեցւոյ արեւմտեան և հիւսիսային կողմերէն են պէսպէս կրօնաւորական մեծ և փոքր խցերի աւերակներ, և անհնար է չկարծել թէ այդ խցերի մէջ պիտի լինի գաղանի դարան, ինչպէս տեղական բնակչաց կարծիքն ևս ցոյց կտայ :

Այս վանքը յայտնի է կողմանցս բնակչաց մէջ « Կուսաբեր », անուամբ, « կուսաբեր գնացի », « կուսաբերիցն իմ գալի », կասեն սովորաբար, որ կուտայ պատմութեանը նշանակութիւն. շ. Միքայէլ Չամչեան Առաքել պատմագրէն քարելով սրբոց շուրիսիմեանց մասանց լատին կրօնաւորաց ձեռքով յԱրնջակ բերիլն, կասէ « հասեալ յԱրնջակ գաւառ, յաւանն Ապարան կայան օթեանս առ Ունիթօռս, և անդ յերիս բաժանեալ գնըշխարս սրբուհւոյն՝ զորս ունէին առ իւրեանս, զերկուսն եղին ի պահեստի յայլ և այլ տեղիս », և այլն (Շատ. Գ. գիրք Գ. գլ. ԺԹ. եր. 570). թէպէտ և յընթացս պատմութեանն ցոյց կտրուի որ այդ այլ և այլ տեղերն մինն Ապարաների իւր մէջն էր, և միւսն Բօլու սարի վերայ, սակայն անշուշտ և այս վանքիս մէջ պիտի պահուած լինի խիստ ծածկաբար, որուն անդիտակ են մնացել թէ Ալթուն-Աւետիք Աստապատցի, որ արքունի սպասաւորօք եկած Ապարաներ մա-

սանց ամբողջ գտնելուն խնդիր էր, և թէ անցիցս պատմիչ Առաքել Վ. Պաւլի-ժեցի, յորմէ և մնացած պիտի լինի անունըս « Կուսաբեր », :

Այս վանքն շատ ուխտաւորներ ունի, և անուանի է ընդհանրապէս շայ և Թուրք բնակչաց մէջ իրան սեպհականած հրաշիւքը. կասեն որ որչափ խելագար մարդ, կամ կատաղած անասուն բերուի սարա դուռն, իսկոյն կբժշկուի. վասն որոյ և վանքիս մօտ կարելի է միշտ տեսնել այդպիսիները: Պ. Ի. Շոպէն, որին վիճակուած էր աշխարհագիր առնել և ըստորագրել այս կողմերն ևս, յիշատակելով Վանա գիւղ, կասէ, « Այս գիւղի մէջ կգանուին աւերակք շուրիմեական եկեղեցւոյ, որմունքն և սիւներն ամբողջ, իսկ կաթուղիկէն խոնարհեալ. եղած է այստեղ և մենաստան Պապական, որոյ հիմնարկութիւնն կհամարին հնագոյն Աջմիածնէն « (տես Истор. памят. соет. Арм. области II. III. եր. 323):

Տեղական աւանդութիւնն՝ զոր մէջ է բերել Պ. Շոպէն, այն միւս եկեղեցւոյ համար է, որ այս վանքի հարաւային արեւմտակողմն կանկանի կէս վերստ հեռաւորութեամբ, դաշտին մէջ. փոքրիկ եկեղեցի մի եղած է այս, որոյ միայն այժմ որմունքն կերելին կէս կանգուն գետնէն վեր սրբատաշ կովածոյ քարամբք և կըրազանգ. սորա համար ասացին ինձ Վանեցիք, որ մեք կանուանեմք « Ատարմի Վիլիսասը », (իսկական կամ հին եկեղեցի). աւանդութիւնն, որ սորա շինութիւնն յառաջ կգնէ քան Աջմիածնին, կծառայէ միայն սորա վաղաւորց հնութիւն հասկացնել, իսկ պատմութեան ա-

առջ չունի արժէք: Այս եկեղեցւոյ և յիշատակեալ վանքի մէջ բաւականաչափ արտորայք կան, որոնք թէև միւսոց հետ խառն կհամարուին այժմ՝ սեպհականութիւն թուրք կալուածատիրոջ, բայց տեղական բնակչաց մէջ ցարդ ևս կկոչուին «Վիլիսա չամլար», (եկեղեցական հող):

1. Ին Բենասպանի Վանայի.

Մենաստանի արևելեան պարսպի տակը կանգնաչափ կանգուն որմն կայ հարաւէն դէպի հիւսիս երկայնած, քարուկիր ամուր շինութեամբ. մէջ տեղն ունի ջրանցք, և կափարիչ վէմ մի. տեղն՝ որոյ առաջեաւ կանգնած է այս որմն, երկու բլրակի մէջ տարածուելով, հովիտ մի կձևացնէ, խորագոյն և բարձր տեղերէն վազած ջրերն իւր մէջ ընդունելով լիճ կկապէ. կայ և առուակ մի հանած, որ հեռու տեղէ ջուր է բերած լճիս համար անձրեաց նուազութեան ժամանակը, ու դորձ է դրուած վանական պարտէզների և պիտոյից համար:

Գեբեղման.

Վանուց հարաւային կողման պարսպի տակ կբարձրանայ փոքրիկ բլրակ մի, որոյ գլխին կայ գերեզման մի, որ մաշուած և կիսաբեկ տապանաքարովն կերևի լինել հին. սորա համար տեղացւոց հարցրած ժամանակս լսեցի որ իրանք որդւոց որդի կանուանեն «քէշիշ - գապրը», (գերեզման քահանայի), և պապենական սովորութիւն կայ մէջներս որ ջրով կամ տենդ ունեցողներն կբերենք կասեն, գերեզմանիս վերայ կլուանամք, ձգելով քարի վրայ սև փող, հաւկաւիթ, ևայլն, ու կող-

ջանայ հիւանդն բոլորովին. նոյնպէս և այս վանքն եկող Հայ ուխտաւորներն առանց այս գերեզմանիս վերայ խունկ և մոմ վառելու չերթան: Այս գերեզմանն ևս հաւանած եմ ասել որ Յովհանն Առնեցւոյն պիտի լինի, ըստ որում ամենեկն դժուարին չէ կարծել որ նորա քրտամբքն և ջանիւք Վատինացած միաբանութիւն մի կամ Եղովուրդ կամելով աւելի մեծարել՝ այստեղ առանձինն թաղած են. տխմար ժողովուրդն ևս իւր փոքրիկ խմբի պարագլուխը մեծարելով խնկօք և մոմեղինօք սովորութիւն թողել է յիանոց, և այդ սովորութիւնը զօրանալով հետըհետէ, այսօրուան օրս Հայ-քրիստոնէից և հայ-մահմետականաց կողմանցս անգիտութեանը և աւելորդապաշտութեանը ակնածելի սրբավայր մի ընդունել տուած է այն շիւնն, ուր ան թեղ հօտը պառակտող և գիշատող գազանի մի ոսկերքն կհանդէպն:

Այս բլրոյ արևելեան հիւսիսակողմն, փոքր մի անջատ կբարձրանայ միւս այլ բլրակ, և սորա վերայ կան երկու գերեզմաններ, իրար շատ մօտ, որոց իւրաքանչիւր մէկի վրայ մի մի մեծ տապանաքար, գուցէ սոցա վրայ գրեր եղած են, բայց հրնութեան ժանեօք փչացրած անհետ, ուստի և չէ յայտ թէ որոնց են հանդստարան. իսկ այս բլրակի հիւսիսակողմը հովտաձև ընկած տափարակ գետնի վրայ կան բազմաթիւ գերեզմաններ, զորս տեղական բնակիչքն կանուանեն «Վրման գարբրտան», (Հայոց գերեզմանք կամ գերեզմանատուն). զարմանալի էր տեսնել այնքան գերեզմանները, որոց ոմանց վերայ մաքուր տապանաքարեր, բայց շատերը հր-

նութեան երեսէն սարսափած քիչ կմնայ որ հողի տակ ծածկուին անհետանան, ինչպէս և շատերն եղած են *):

Ե. յժմու բնակիչք Վոնայի յիսուն ասն չափ Մահմետականք են, ամենքն ալ բնիկ տեղացիք, սերունդք նախնի Հայոց. կպարապին երկրագործութեամբ, որ նոր նոր կծաղկի մէջները. արհեստաւորներ չկան մէջները, նոր ի նորոյ սկսած, բայց շատ շատացրած ունին ծառատունկներ և պարտէզներ. այս զիւղիս բնակիչք բոլոր գաւառի մէջ յայտնի են իւրեանց զիւրաբորբոք և կռուասէր բնաւորութեամբ, իսկ մէկ մէկու շատ պաշտպան և օգնող. միւս զիւզորէից բնակիչները զսոսա « տալի-քունայի», կանուանեն և կակնածեն:

Իւան — տաղը.

Վոնայի արևելակողմն և անտի քառորդ ժամու ճանապարհ հեռի կբարձրանայ սրածայր լեռան Իւանտաղը (օձալեռան). գրեթէ անմտաչել է սորա դագաթը՝ որ և ունի շատ էրէներ:

Երեք անուն ունի այս լեռան, «Իւան-տաղը», «Իրան-տաղը», և «Ինան-տաղը»:

(*) Ինչպէս այս գերեզմանատան մէջ, նոյնպէս և Ապրակունիսի և ուրիշ զիւզորէից քիստոնայ գերեզմանաց վրայ կտեսնուին խոյածե արձաններ. յայտնի բան է որ խոյածե տապանաքարը Պարսկական ասորական է հնարել, միայն Հայերն ևս, որոնք ինչպէս շատ բաներով գնացել են նմանել իւրեանց իշխող տէրութեանն, գուցէ և այս ձև տապանաքարով՝ կամեցած են նոցա սրտերը շահել. Հայոց խոյածե տապանաքարին յարևելս են ուղղած երեսները, պարսիցն յարևմուտս:

Իւան-տաղը՝ կնշանակէ օձի լեռան. աւանդութիւն կողմանցս ցոյց կտայ որ հին ժամանակը շատ և բազմատեսակ օձեր կային սորա վերայ, իսկ այժմ մեծանուն ճանապարհորդն Հակոտհատուզն յիշատակելով այս լեռան՝ երկու ժողովրդական աւանդութիւն մէջ կրերէ, առաջինն իբր թէ օձ մի եթէ մինչև քսանհինգ ամաց հասանին մնաց անտես մարդկանէ, կառնու կերպարանափոխութեան զօրութիւն, ուղածի պէս ամեն կենդանւոյ կերպարանքով երևելու. որոյ համար և երիտասարդի մի պատահած աղջկայ կերպարանք առնող օձի անցքը կզրէ. երկրորդ թէ՛ մեծն Իսկէնտէր (Աղէքսանդր) իւր կանայքը բնակեցոյց այս լեռան վերայ, և տեղւոյն բովեալ օձերը կզգուշանան նոցա պահպանութեանն:

Իրան-տաղը՝ լեռան Պարսկաստանի:

Ինան տաղը, կամ այսպէս «Ինան քի տաղ սըրը», աւանդութիւն երկրին կասէ որ՝ երբոր Աոյի տապանը ծփալով ջրոյ երեսին կզար անցնել դէպի Արարատ, հպեցաւ սորա դագաթին, վասն որոյ Աոյ սոսայ, « հաւատա որ սա էլ լեռ է, »:

Իանանիար (Ապարանէր).

Ս. Կարապետի վանքի հիւսիսային արևելակողմն վերստ մի հեռաւորութեամբ կանկանի այս աւանն, երբեմն անուանի քաղաքն Հայոց: Սորա բուն անունն է «Ապարան», կամ «Ապարաներ», երբ որ շնորհիւ ունիթօռաց լատինացած հայ բնակչաց տեղւոյս արտասուելի ճակատագիրն վճռեց նոցա համար մահմետականութիւն, հեռզհեռէ և անունս «Ապարաներ», աղաւաղուելով, թլպատեցաւ յայժ-

մու կոչումն «Բանանիար», : Հ. Միքայելի կարծեացը նայելով, այս քաղաքի բուն և ամենահին անունն պիտի լինի «Տիգրանակերտ», ըստ որում նոյն անուան վերայ ծանօթութիւն կարդելով հատ. Ա. եր. 196, կասէ. «բայց հայելով միանգամայն ի պատմութիւնս Հայոց և այլոց ազգաց, մարթ է ասել թէ ոչ մի, այլ երկու էին Տիգրանակերտ քաղաք յայլ և այլ տեղիս շինեալ, մինն ասի լինել Ամիգ քաղաք, այն է Տիարպէքիը յաշխարհին Աղձնեաց յառաջին Տիգրանայ կանգնեալ, և միւսն երեւի լինել յաշխարհին Միւնեաց, գուցէ թէ այն իցէ Ապարան քաղաք կամ Ապարաներ, շինեալ թերևս յերկրորդ Տիգրանայ, կամ թէ գուցէ սոյն այս Ապարան քաղաք իցէ շինեալ յառաջնոյն Տիգրանայ, իսկ Ամիգ ի յերկրորդէն,» :

Առանց այս անուան ևս, Ապարաներ քաղաքը իւր ամենահին, նշանաւոր և անուանի քաղաքը լինելու հաստատութիւնն ունի պատմութեան մէջ : Երդէն փրկչական 59 թուականին կղանեմք Ապարանը հռչակաւոր, բազմամարդ և բարգաւաճ քաղաք մի, զոր Աորբուզոն Հոովմայեցի սպարապետը իւր յաղթութիւններն յառաջ տանելով՝ կպատրաստուի պաշարել առնուլ, և կյաջողէ խորհրդոյն կատարումն յօժարակամ հրնազանդութեամբ քաղաքացւոց : Վաղաքիս մէջն էր ամրացած և Տիգրան արքայ յամի 61. երբոր Պարսից Վարէհ-Ողոզէս արքայի Մանէճ զօրավարը Պարսիկ և Եսորի զօրօք յանկարծ յարձակեցաւ քաղաքի վերայ և պաշարելով զայն՝ «ըսկաւ նեղել ի մարտ պատերազմի, և զօրք նորա մեքենայիւք և սանդղովք ջա-

նային հուպ մատչել, այլ վտանգեալ ի քաղաքացւոց՝ ոչ կարէին վճարել ինչ,» : Զամ, պատմ. եր. 312 :

Այս տեղ բերուեցան յԺԲ. դարուն Ատոն կրօնաւորաց ձեռքով մասունք սրբոց Հռիփսիմեանց, որոց մի մասն այս տեղ գաղուածն էր, զոր գտաւ Աւետիք Ալթուն գանակոծ առնելով տեղացի երեց մի : Այս տեղէն էր Մխիթար Ապարանցի Ունիթօոաց կարգէն, պատմիչ, որ իւր ամբողջ պատմութիւնն լցրել է մուրեանդ կրիւք :

Այս տեղ էր և չարածնունդ Ունիթօոաց եպիսկոպոսարանը ըստ պատմելոյ Զահկեցւոյն :

Այսքան մեծաբնակ և անուանի հինօրեայ քաղաք մի այսօրուան օրս հասարակ աննշան զիւղ մի է, բնակարան հարիւր քսան տուն Մահմետականաց : Ապարաների երբեմնին մեծութեան, բազմամարդութեան և բարգաւաճանաց վկայք՝ դեռ ցայսօր ժամանակի կհանդիսանան նախնի Հայ, և Հայ-Ատոն բնակչաց հազարաւոր գերեզմանները զիւղի հիւսիսային և հարաւային կողմերը. որոց շատը դեռ Պարսկական մուրեանդութեան պատճառաւ ջնջուած անհետացած, հազիւ նշմարելի պարսպաց հետքը, որք դէպի գիւղն տանող արեւտեան ճանապարհի վրայ կտեսնուին երկարած *). նմանապէս և քանի մի տեղեր, դաշտի երեսը, մանաւանդ գիւղի հարաւակողմն տեսնուող այնքան հնձանների մնացորդքը, և այլն :

(*) Գուցէ քաղաքի բերդի պարիսպն է սա :

Եկեղեցի Եւրոպայի.

Գիւղի մէջ փոքրիկ ապառաժաքար բըւրակի մի վրայ կայ ցարդ կիսաւեր եկեղեցին, եպիսկոպոսարան Ունիթօուաց. շէնք եկեղեցւոյն մինչև կամարները քարուկիր, իսկ կամարները և տանիքը թրծած աղիւսով. թաղակապ տաճարն բաժանուած է երեք մատուռի, որոց միջինն մեծ, և հաստատուած է եղել չորս սեան վերայ. երեք մատուռն ևս ունեցած են դմբէթներ. աւագ սեղանն շրջապատող որմոյ վերայ յարեւելոց, ի հարաւոյ, և ի հիւսիսոյ կան քանի մի հատ խաչքարինք, որոց մի քանին խիստ ճարտարաբուն քանդակուած. հիսիսակողման գեղաքանդակ խաչքարի մի վերայ խաչի վերին թևի երկու կողմն գրուած է « ԹՎ — 217 », իսկ ի պատուանդանին « Քրիստոս Աստուած, յիշեալ զտիկին ... », միւսն եղծեալ. միւս բոլոր խաչքարանց վերայ կային արձանագրութիւնք՝ բայց եղծեալք, իսկ աւագ սեղանոյ հարաւային և հիւսիսային կամարաց որմոց մէջ կային երկու գեղարուեստ խաչքարինք, ամեն մէկն գեանէն կանգուն և կէս վեր. հարաւային խաչքարի վերայ գրուած էր « ԹՎ. Ռ՝ՕՆ. կանգնեցաւ խաչս ի բարեխօսութիւն Պատրոնաճարին. յիշեալ Քրիստոս Աստուած և ողորմեալ », հիւսիսային խաչքարի վերայ կիսամաշ գրովք « կանգնեցաւ խաչս բարեխ... » թՎ 216 », նոյնպէս հիւսիսային մատրան որմոյն մէջ կային երեք խաչքարինք, որոց երկուքն արձանագրած՝ բայց մնացին անվերձանելիք: Այս եկեղեցւոյ ներքեւը եղած էր վիմափոր դաղտնի դարան, որ անյայտ էր միանգամայն

մինչև ցամն 1870, յորում պատահամբ գիւղացի մօտաբնակ տաճկին մէկը արեւելեան կողմէն տան ծածկի համար հող վեր առած ժամանակը դուռն գտնելով, հանած էր ինչպէս նոյն գիւղացիք կհաւատացնէին, շատ զարդեր և անօթեղէններ, թէպէտ և ես ամեն ջանք գործ դրի որ կարողանամ ձեռագիր գրեանքը ձեռք բերեմ եթէ եղած են յիրաւի, բայց ի զուրանցաւ: Արովհետև այս եկեղեցւոյն տըւած չէ այս կողմերս առանձին և սեպհական նշան հրաշեց, ինչպէս սուրբ Արարպետի և Քունայի վանքերին, վասն որոյ տեղեկան Մահմետականաց մէջ առած է եղած սովորաբար ասել, « հալա սուրբ Արարպետը օձի կծածն ա լաւացնում, Քունու վանքը գժուածը, բաս տու, Քանանեարի եկեղեցի ինչ բանի ես պէտք գալի »:

Գաբան Լաբանի.

Ապարանների արեւմտակողմն փոքրիկ բլրակի մի վերայ կայ քառանկիւնի մատրան շինուած մի « Գաբան — Թաբասը », անուամբ. ըստ աւանդութեան նախապաշարեալ բնակչաց այս տեղէն անցած է Ալին, որոյ կրնկի տակն ընկած քարն է, որ այժմ կը յարգուի. սակայն ինչպէս կերեւի, եղած է սա շայոց սրբավայր, ըստ որում վերջին տարիներս ջերմեռանդ Մահմետականին մէկը նորոգելու մտօք քանդել տուած ժամանակը, հաներ է հողի մէջէն ոչ սակաւ հին ճրագարաններ, կերեւի որ գիւղի քրիստոնէութենէ ի Մահմետականութիւն փոխուած ժամանակը թէև երեսի վերայ ու ամայի մընացած է եղել այս սրբավայրը, սակայն

ակնածութիւնն՝ որ բնականաբար երկար
 ժամանակ կարող է տպաւորուել մտաց
 և սրտից մէջ, վերջապէս Ալւոյ անուամբ
 դաս ձեռք յարգանքը տղեւո Մահմե-
 տականաց մէջ և դուցէ ջանիւք խորա-
 մանկ շահատիրութեան :

Բնակիչք զեղջս երեք մասին չափ եկք
 են վերջին ժամանակաց, կպարապին երկ-
 րագործութեամբ, այգեգործութեամբ,
 և խաշնապահութեամբ. բաց ի վեց տանէ
 ամենքն աղքատ. ունին մզկիթ մի հասա-
 րակ շէնք՝ զիւղե մէջ տեղը՝ ուր կժողո-
 վին իբրև ի կեղրոն շրջակայ Մահմետա-
 կանք արք և կանայք, Ալւոյ և նորա որ-
 դւոց մահը փառաւորապէս տօնելու հա-
 մար: Թէ տեսնելի դու, ընթերցող ևղ-
 բայր, թէ այնտեղ, ուր երկար ժամանակ
 Առասաւորչի շարչարանքը կտօնուէր, այ-
 ժըմ Ալւոյ, Հասանայ, և Հիւսէյնի
 նահատակութիւնը կտօնուի, կշեւարէիւր
 յիրաւի անդեպի դժնէութեան վերայ:
 1869 թուականի Մարտ ամսին մէջ պիտի
 կատարուէր այս հանդէսը, գնացի և ես
 տեսնելու. զիւղին մօտեցած ժամանակը
 տեսի հարիւրաշափ պատանիներ և երի-
 տասարդներ երկար ու ձիք շարուած ճա-
 նապարհի մէջ, որի ձեռքը դաշոյն, և որին
 բիր, կուրծքերը սպիտակ հանդերձ փաթ-
 թած և գլուխները պատառած սրով
 ու քարով, և արիւնով ներկած բոլոր
 կուրծքերը ու դէմքերը, կատաղի և վրէժ-
 խնդիր ձայնով կպոռային “Հասան,
 Հիւսէյն, Ալի, աղամ լայ, և այլն. նո-
 ցա ձայնին իբր առաւել Թարութիւն և
 աղղուութիւն տալու համար կրնթանային
 հեաները թմբկահար մի և փողահար
 (գափի, զուռնաչի) և որոնք իբր ըստ տե-

ղւոյն մերթ կսկսէին ձայները հանել, և
 մերթ լուել. մտինք զիւղը, բերին ինձ օ-
 թոց նստելու մզկիթի պատին տակ, որոյ
 առաջ՝ հրապարակին մէջ պիտի հանդէ-
 սը կատարուէր, հետզհետէ եկին ժողովե-
 ցան այն տեղ և շրջակայ սգաւոր զիւղա-
 ցիք, բերելով իւրաքանչիւր զիւղե բազ-
 մութիւն իւր հեան պատգարակ մի զար-
 դարուն չորս մարդոյ ուսերի վերայ բար-
 ձած, որոց մէջ բազմած էին Ալւոյ որդիքն
 և քոյրն, որոց հասած էր ժամանակն
 մահ և սուգ տեսնելու. հանդէսն սկսաւ
 բորբոքուել երկար ժամանակ հրապար-
 կին մէջ բոլորաշրջան խմբով ու օղը
 լըցնող աղաղակներով ամենքն ևս շապ-
 կաց օձիքները արձակած, որը դաշոյնով
 ճակատը կձեղքէր, որը բաց կուրծքը
 կկոծէր. իսկ այդ միջոցներին բերնեղէն
 լսուած բառերն էին “աման Ալի, աման
 աղամ, Հասան լայ, Հիւսէյն լայ, և այլն.
 վերջապէս պատրաստուեցան երթալ ընդ-
 արձակ դաշտ մի զիւղէն դուրս, ուր պիտի
 ներկայացուէր և պատերազմն. հեաներն
 միասին գնացի և ես, առաջին անգամ
 այնպիսի հանդէս տեսնելու. մօլլայի մէ-
 կը Ալի ձեւացած նստաւ ձի և շրջապա-
 տուած ծառաներէն եկաւ կանգնեցաւ
 բազմութեան մէջ, որի առաջն բերին ոչ
 խար մի մատաղ անելու, բայց չընդունեց,
 ու սկսաւ նախ խրատել ու մխիթարել ժո-
 ղովուրդն. ապա երբ տեսաւ Աղաթին սպա-
 ռազմնաձ, յայտնեց որ պիտի դուրս գայ
 թշնամւոյն դէմ. ժողովուրդն սկսաւ լալ,
 բայց նա սկսաւ մխիթարել զնոսա և իւր
 ընտանիքն. թէ բնաւ չվախենաք. ես ու-
 նիմ օգնութիւն ի վերուստ, որով ան-
 շուշտ պիտի յաղթեմ թշնամւոյն. իսկ

Թէ կամք Տեառն վճռած լինի իմ մահը, այն ժամանակ միայն անհաւատն թոյլ տուութեամբ երկնից կարող է ձեռն բարձրացնել իմ վերայ. բայց եթէ մեռնիմ ես, դիտացէք որ կերթամ ձեզ համար երկնքի մէջ տեղեր պատրաստելու: Այս խօսքերն ասելով կուզէր բաժանուիլ, միայն նորա Հասան որդին աղաչանքովն նորան արգելք եղաւ և ինքն դնաց. փոքրը ժամանակէ ետքը հրացանի ձայնը լսուեցաւ, և ահա Հասանն սպանուած Եզրիէն դազաղէ մէջ գրած բերին բազմութեան մէջ. լաց և սուգ պաշարեց զքորսն, մայրն, և ժողովուրդն. բայց թշնամույ վրէժն առնելու համար պարաստուեց երթալ միւս եղբայրն, Հիւսէ յինն. նոյն հանդէսն կատարուեց և Հիւսէ յինի վերայ, և ողբացին նորա դին ևս. իսկ արի և ահարկու Եզրիսն ամեն մէկը սպանելէն յետոյ ձին կմտրակէր կգար մօտ և Ալուն ձայն կտար «մարդ կայ ուղարկիր, չկայ՝ դու արի կուուելու», տեսարանն այսպէս քանի քանիցս կրկնուեցաւ, և իւրաքանչիւր անգամին ժողովուրդն մեծակական ողբով կլցնէր վայրը, մանաւանդ երբոր կարգադիր ախուհն լալով կղիմէր հետևողացն և յուսահատ կերպով կգուժէր սպանելոց մահն, և մօտալուտ վտանգն. վերջապէս կարգն եկաւ Ալոյ, որ բոլորն գրկախառնած մխլթաբեղէն յետոյ մեկնեցաւ. նոյն հրացանն Եզրիի ծանոյց և նորա մահը՝ որով անտանելի և դառնակսկիծ սուգ պատեց ամենքը. և յիրաւի այնքան բարձրացաւ լացն ու կոծն, որ կարծես ներկայացումն չէր՝ այլ իսկական անցք. ի վերջոյ Եզրիսն արշաւեց եկաւ մտաւ բազմութեան մէջ

մերկացրած թուրը ձեռին, բռնեց Ալոյ և որդւոց մատաղերամ սերունդը, որպէս զն խողտողէ միանգամայն և ջնջէ. սակայն հրեշտակն աներևոյթ կերպով բռնեց սուրն և զինքն հալածեց այն տեղէն անդարձ: Ամենայն խօսակցութիւն հանդիսիս մէջ կլինէր երգով. յաւարտ այս ամենայնի, մեծ ախուհն ել բարձր աթոռի մի վերայ, և կարդաց օրհնութիւն ամեն կարգի մարդկան, և ցրուեցան ամենեքին:

Սալթաղ:

Աստուծակից Ապարաների և անտի կէս վերստ հետի կանկանի այս զիւզ, որ ունի այժմ յիսուն տուն մահմետական բնակիչ: Այս զիւղն Ապարաներ քաղաքի մասն է եղած ի հնումն, և որովհետև շինուած է եղել աւառած և մեծատարած սալաքարի վերայ, ուստի և առած է անունս «Սալթաղ», որ այժմ Սալթաղ, այն է՝ սալի վերայ շինուած թաղ. սորա բնակիչքն ևս որսացած լինելով ունիթօւաց թակարդի մէջ, նոյն ճակատագրին են հանդիպել, որ ինչ միւս գեղեր: Այժմու բնակիչք աղքատ են և կպարպին երկրագործութեամբ, և խաշնարածութեամբ. այդեգործութիւնն նոր սկսած է մջները, բայց չէ ծաղկած. Եկեղեցի գեղջս՝ որ եղած է հնումն, աւերեալ գոլով, ցոյց կտայ միայն հիմանց մնացորդքը: Վիւղի հիւսիսակողմն, ճանապարհի վերայ է հին գերեզմանատունն անանբաղդ Հայոց, լցուած բազմաթիւ խաչքարերով, որոց շատը զիւղի բնակչաց ձեռօք քանդուած անհետացած են նոր բացուած առուակի պատճառաւ:

ԲՈՂՈՒՍԱՐՆ.

Սայթաղի հիւսիսակողմն և գրեթէ գիւղի կողքին կանկանի այս «Բոլու-սար», ասացեալ բլուրը կամ լեռնակը, որ երկ- ձիւղ գագաթովը բաւական նմանութիւն ունի Մասիսին: Եյս տեղ էր գաղած մասն ինչ նշխարաց սրբոց Հռիփսիմեանց, զոր հանել տուաւ Ալթուն Եստապատ- ցի. բայց մասանց տեղն կանգնած կայ և ցարդ ևս կմնայ փոքրիկ մատուռ մի «Աու- սանաց», անուանեալ, հասարակ քա- րամբք Թայն շարուած. ուր որոշ օրուան մի մէջ Նորաշէն գիւղի Հայերը կգան ուխտ: Մերձակայ բնակչաց մէջ այս լեռ- նակն կկոչուի նաև «հարսն ու փեսայ», աւանդութիւնն կասէ որ երկու նորապը՝ սակ ածուք ճանապարհ ելած ժամանակը կհանդիպին աւազակաց, որոց միաքը կը- լինի հարսն փախցնել. իսկ ողորմելի ա- մուքն սոցա ձեռքէն ազատուելու մտօք կե- լանեն սորա գագաթն թէ և, բայց երկուքն ևս քար կդառնան և կմնան այն տեղ:

ՆՈՐԱՇԷՆ.

Բոլուսարի արևելեան ստորոտի վերայ կանկանի այս գիւղը. բնակութիւնը վաթ- սունաչափ գերդաստանաց, որոց կէսը Հայ. անուէս «Նորաշէն», արդէն ցոյց կտայ որ վերջին ժամանակաց է. իսկ գիւղի չորս կողմիցը տեսնուած բազմաթիւ շինու- թեանց աւերակները և հնակաւոյց Ակե- ղեցին ցոյց կաան որ և յառաջագոյն ե- ղած է անդէն բնակութիւն. այս պատճա- րաւ հարկաւ պէտք է կարծել որ սա պիտի լինի Չահկեցւոյ յիշատակեալ «Շահ- բունիս», գիւղը, որոց կէսն ի ժամանակին

թակարդեցան ի յաղթս Աւնիթուաց, Բնակիչք տեղւոյս կպարապին սովորաբար երկրագործութեամբ և սակաւուք այդե- գործութեամբ. այժմու Հայք տեղւոյս գաղթականք են Պարսկաստանի բացի սա- կաւաւոր տներէ:

ՍՈՐԷՔ ԵՍՏԱՊԱՏՈՒՄԻՆ ԱԿԵՂԵՑԻ.

Հոյակապ՝ ամենաշքեղ և փառաւոր կոփածոյ քարամբք Ակեղեցի մի բաւա- կան մեծ և ընդարձակ, սագտչէն տանիք Ակեղեցւոյն և փոքրիկ կաթուղիկէն չորս մեծամեծ ամրապինտ սեանց և ութն կի- սասեանց վերայ հաստատուած են. եր- կայնութիւն տաճարին արտաքուստ երե- սուն քայլ իսկ լայնութիւնն տասնեութ, ունի երեք սեղան, երկուքն աւագ սեղա- նոյ յաջմէ և յահեկէ, աւանդատանց վե- րայ շինուած. ունի երկու դուռն, մի ա- րևմտեան՝ փառաւոր՝ հոյակապ և գեղա- քանդակ. սորա ճակատին հաստատուած է ամբողջ քար մի, որոյ վերայնուրբ քան- դակեալ երեք խաչ քարեր. ներքոյ խաչ- քարին գրուած է. «Յիշատակ է դուռս մահտեսի Աթանիսի որդի Վազարին», յաջմէ նորին. «յիշատակ է խաչս մահտե- սի Պրիգորին և որգւոյն Մանուկին», և յահեկէ. «Յիշատակ է խաչ՝ Հայրապետի որդի Միքայէլին», դրան աջակողմեան սեան ճակատին, «Յիշատակ է սիւնս մահ- տեսի Ազարեայ և ծնօղացն մահտեսի Աղի- այի և Խէրխաթունին», Եւաջև Ակեղեց- ւոյս չորս փառաւոր կամարակապ սեանց վերայ հաստատուած է գաւիթ շքեղ, իւ- րաքանչիւր սեան արտաքին ճակատին քան- դակեալ մի մի պատկեր չորից Աւետարան- չաց և գրուած նոցա անունները, իսկ հիւ-

սխալյին սեան ճակատի վերայ զբուսած է
 «Յիշատակ է խաչս Աւհանին կողակցի
 'Նաղլուիին», իսկ հարաւայնոյ վերայ, Յի-
 շատակ է սուրբ պատկերս Մարկոսի որդի
 Ովանէս վարդապետին», Գաւթի տանի
 քէն բարձր Տաճարի արեւմտեան պատի
 ճակատին լուսամուտէն վեր, «Յիշատակ է
 սուրբ խաչս Լյվլաղի որդի Հարոնին Թ.
 ԱՂՆՆին» :

Հարաւային դրան ճակատի սալքարի
 վերայ, «Հիմնադրեցաւ սուրբ եկեղեցիս ի
 թվ. Հայոց ԱՒԽԼին», սակայն ինձ իս-
 պառ անհաւանելի է՝ որ այսքան վսեմ և
 մեծածախ փառաւոր յարկ մի մօտ ժա-
 մանակի գործ լինի. գուցէ արձանագիրն
 վերջին ժամանակաց գործ լինելով՝ անգի-
 տութեամբ այն թուականին տուած է շե-
 նութիւնն. մի և նոյն արձանագրին իբր
 շարունակութիւն՝ յետոյ ժամանակաւ զը-
 բուսած է, «Ես 'Նորաշէնցի Մարկոս Ե.
 փութովս իմ յօժար կամաւս Ժ. խալվար
 'Նախջեանի վախճմ' արիմ՝ Եստուածա-
 ծին Եկեղեցւոյն ի թվ. ԱՂՎԺին»,
 գաւթի արեւմտակողմն եղած են ըստական
 եկեղեցական սենեակներ, այժմ հաւասար-
 ութեամբ և բնակութիւն ձգած է քահանա-
 յի համար : Եկեղեցւոյ արեւելակողմն է
 աղբիւրն նորին, որոյ երկու թաղակապ
 հոյաշէն աւազանների մէջ վաղեր է հա-
 մեղ ջուր, խողովակներով հեռուէն բե-
 բած, իսկ այժմ միանդամայն ցամաք և
 խցեալ :

Սուրբ Եղիշէն.

Ե. յժմու ծառաստանեայց մէջ ընկած
 փոքրիկ վայելչաձև եկեղեցի մի եղած է,
 այժմ աւերակ. մնան միայն սեղանն և տա-

նեաց կէսն. սեղանոյ չորս կողմով պատին
 մէջ թողած կան եօթն պատուհաններ,
 և ամեն մէկի մէջ մի մի խաչքար. նայե-
 լով խաչքարների քանդակներին, բաւա-
 կան նուրբ են, իսկ արձանագրութիւններն
 շատ խակ ձեռն գործ : Երեւելեան հիւսի-
 սակողման խաչքարի մի վերայ տեսած ար-
 ձանագրի թուականն միայն յանձն առինք
 օրինակել, որ է «Ի թ. ԳՂՎ», յաջմէ
 և յահեկէ սեղանոյն եղած են պահարանք,
 այժմ հազիւ նշմարելիք :

Սահմանք 'Նորաշէնի.

Ե. աջեւալ գիւղիս Երնջակ գետի վե-
 րայ շինուած էր փառաւոր կոթածայ քա-
 րամբք կամուրջ մի գեղեցիկ, զոր յամի
 1871 Օգոստոս ամսին ահեղ և կարգէ
 դուրս հեղեղ մի քանդելով կէսն անհե-
 տացոյց :

Ղանտի—Մաղրայ.

'Նորաշէն գիւղի զաշտին մէջ արեւելա-
 կողմն դէպ ի Ղաղանչի տանող ճանա-
 պարհի ձախ թեւի վերայ կանկանի փոքրիկ
 հողակոյտ մի «Ղանտի—Մաղրայ», ա-
 նուսով. աւանդութիւնն կասէ որ այս
 կարկառը Ղանտի անուն աւազակի մի գե-
 րեզման է : Ղանտի իւր ահարկու սրովն
 ահ ու զողի մէջ պատած պաշարած է ե-
 ղել բոլոր գաւառը. որչափ կաշնատին ա-
 ռաջն փակելու, անհնարին կլինի. ըսպա-
 նութիւնն, յափշտակութիւնն օր քան
 զօր կսաստկանայ. Հահաբաս արքայ ձա-
 րահատեալ զօրք կուղարկէ որ ըմբռնեն
 զինքն. բազմութիւ արքունի հրոսակը մին-
 չև Ծղղկեաց (Սխտանի) լեռները փախցնե-
 լով վերջապէս կըռնեն Ղանտիը ու կըբե-

րեն. Շահաբաս կհրամայէ կանգնեցնել, և ամեն մի զօրականին իւր ձիոյ տուգրակով հող բերել լցնել նորա գլխին. որով կձեանայ այս փոքրիկ բլրակը ^{«Ա»} անտի—
Մազրայ,»:

Խաչկաշէն.

Իլանտաղոյ հիւսիսային արևելեան ստորոտի վերայ ձգուած է այս զիւղ, երբեմն շայաբնակ. այս զիւղն ևս ընդունեց ունիթոռաց քարոլուծիւնն. այժմու բնակիչք զեղջ՝ քառասուն տան չափ մահմետականք են, բայց չէ յայտ թէ հին շայերն են լատինացած, թէ յետոյ այլ և այլ տէրերէ ժողովուածներ. եկեղեցի զեղջըս, որը հնութեան երեսէն, և որը մահմետական մոլեռանդուութեամբ այժմ միանգամայն գետնի հետ հաւասարուած ու եղած է գեղացոյ մէկի պարտեղատեղ հիմունքն միայն միան նշմարելիք. այս գեղես մէջ կրդիէ աղբիւր մի բարեհամ ի բաւականութիւն բնակչացն:

(Շարունակել)

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՇԻՐԵԿԵՅ.

(Շարունակել)

Գ. Շիրակ Ենոյ:

Որպէս և սա բաժանի յԱրևելեան Շիրակայ Ախուրեան գետով, նոյնպէս և յԱրազգաւորաց Աարուց գետովն ի հիւսսոյ. յարևմտից ի զիւղօրայիցն Աարուց. և ի հարաւոյ յարևմտեան Շիրակայ ձորովն Մազաբերդու 1):

(1) Այս բերդի յիշատակութեան առ պատմութանս սովին անուամբ ոչ պատահեցայ, որ աստ աս ամենեւին նովին անուամբ զեռ կոչի:

Աւ սա երկիր հացաւէտ, ընդարձակ դաշտորայս ունի, և յարևմտակողմն ի թիկունս Ենոյ՝ տարածանին ընդարձակ լերինք խտաւէտ և պարարտարօտ, և ձորս ձորս ի ձմերոց խաշանց, և քարանձաւայրս ի պահպանութիւն նոցա. բայց և երբեմն հիւս ձեան իջանէ, որպէս և յաւուրս մեր 1846 զիպաւ, որ առ դրամբ այրին զեղեալ եկաց, և փակեալ յանշնչութեան զխաշինս խեղդեաց:

Ենի քաղաք իբրև երկոտասան ժամուհետ ի կայ ի Աարուց գրեհս ի միջակի անդ չորից մասանցն զետեղեալ. երկիր հացի, մսոյ և ձկանց: Մրգեղէնք իւր ի Բագարանէ, ի Աաղզուանէ, յԱրարատեան դաշտէ գան բաղում առատութեամբ, թող զչորացեալ մրգեղէնս որ զայ յԱտրպատկանէ, յորոց զոմանս ածեն անդր ի Բարխունէ:

Աղահանք իւր որ ի Աաղզուան և ի Աողբ՝ մօտաւոր գոլով՝ մի է ի վաճառաց նորա, և տարածանի մինչև ի խորս Արատանի 2):

Այս քաղաք ի հանդիպոյ՝ յաջմէ Ախուրեան գետոյ ունի զքարակաւուրս հետ զհետէ բարձրացեալս, և ինքն կայ ի ձախմէ ի վեր ի վեր նոյնպէս բարձրացեալ արևահայեցիկ, զիտող ի գետ անդր:

Ի հիւսսակողմն 3) կրկին պարխապք նորա մեծաւ մասամբ անկործան. զորս

(2) Առ զիողականս որք կարօտին անասնոց բաղում պէտն, ոչ սակաւուք աղովք շատանան զի և նոցա պարտին տալ ուտել յամարան:

(3) Մէք զոր հիւսիսակողմն եղաք, շ. ներսէս վարդապետ յարևելակողմն գնէ ի Բաղմալափին, որում չմ բաւական հակառակել, բայց ինձ սյապէս թուեցաւ, իցէ թէ ի հիւսիս արևելից իցէ կամ յարևելս հիւսսի: